ԼԴ/0032/01/26

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՔՐԵԱԿԱՆ ՊԱԼԱՏ
Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՎԱՐՈՒՅԹԻ ԸՆԴԴԱՏՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ԼՈՒԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

9 մարտի 2026 թվական քաղաք Երևան

Հայաստանի Հանրապետության Վճռաբեկ դատարանի քրեական պալատը,

նախագահությամբ՝ Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորներ՝ Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Հ.ԳՐԻԳՈՐՅԱՆԻ
Ա.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ

ուսումնասիրելով թիվ ԼԴ/0032/01/26 քրեական վարույթի տարածքային ընդդատության հարցը լուծելու համար Վճռաբեկ դատարանի քրեական պալատ ուղարկելու մասին Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանի՝ 2026 թվականի մարտի 2-ի որոշումը,

Պ Ա Ր Զ Ե Ց

<u>Վարույթի դատավարական նախապատմությունը.</u>

1. 2026 թվականի հունվարի 8-ին Լոռու մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանում ստացվել է Հաբիբ Մուսթաֆայի Էռասլանի, Հարութ Զոհրաբի Ղալբուրջյանի, Միրո Ջամալի Մախմուդովի և Ջևդեթ Արմենի Քոլչաքի

վերաբերյալ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 44-470-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով թիվ 58237225 (ԼԴ/0032/01/26) քրեական վարույթը:

Լոռու մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը (դատավոր Տ.Թադևոսյան) 2026 թվականի հունվարի 12-ին որոշում է կայացրել թիվ ԼԴ/0032/01/26 քրեական վարույթն ստանձնելու և նախնական դատալսումներ նշանակելու մասին:

2. Լոռու մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը 2026 թվականի փետրվարի 18-ին՝ նախնական դատալսումների ընթացքում, որոշում է կայացրել թիվ ԼԴ/0032/01/26 քրեական գործի տարածքային ընդդատությունը փոխելու և այն Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարան ուղարկելու մասին:

3. Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանը (դատավոր Հ.Ավագյան) 2026 թվականի մարտի 2-ին որոշում է կայացրել թիվ ԼԴ/0520/01/25 քրեական վարույթը Վճռաբեկ դատարանի քրեական պալատ ուղարկելու մասին՝ ընդդատության հարցը լուծելու համար:

4. Քրեական վարույթը Վճռաբեկ դատարանում ստացվել է 2026 թվականի մարտի 3-ին:

<u>Ընդդատության հարցը լուծելու համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքները.</u>

5. Հաբիբ Մուսթաֆայի Էռասլանի նկատմամբ ՀՀ րեական օրենսգրքի 44-470-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով հանրային քրեական հետապնդում է հարուցվել այն բանի համար, որ *«[Ն]ա Ֆրանսիայի քաղաքացի Ժ.Մ.Խ.Հ.-ի կողմից օրենսդրությամբ սահմանված կարգի՝ «Պետական սահմանի մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի և «ՀՀ պետական սահմանի ռեժիմ սահմանելու մասին» ՀՀ կառավարության 2011 թվականի մայիսի 12-ի թիվ 702-Ն որոշման պահանջների խախտմամբ Հայաստանի Հանրապետությունից ելք կատարելու ու օտարերկրյա պետություն մուտք գործելու համար Գ.Հ.Թ.-ի, Ֆ.Ա.-ի, Ջևդեթ Արմենի Քոչաքի, Հարութ Զոհրաբի Ղալբուրջյանի և Միրո Զամալի Մահմուդովի հետ նախնական համաձայնությամբ, խմբի կազմում, շահադիտական նպատակով կազմակերպել են անօրինական միգրացիա, սակայն*

իրենց դիրքավորության մեջ ընդգրկված հանցագործությունը իրենց կամքից անկախ հանգամանքներով չի իրագործվել, որպիսի գործողությունները դրսևորվել են հետևյալում

Այսպես.

Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի՝ ԵԴ/1429/01/22 քրեական գործով 2024 թվականի փետրվարի 13-ի դատավճռով Ֆրանսիայի Հանրապետության քաղաքացի, ազգությամբ հայ Ժ.Մ.Խ.Հ.-ն ՀՀ քրեական օրենսգրքի 46-393-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով և ՀՀ քրեական օրենսգրքի 399-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով նախատեսված հանցանքներ կատարելու համար դատապարտվել է ազատազրկման 7 տարի ժամկետով: Վերջինս, իր նկատմամբ նշանակված պատժի կրումից խուսափելու համար, նպատակադրվել է ապօրինի՝ առանց սահմանված փաստաթղթերի և պատշաճ թույլտվությամբ, օրենսդրությամբ սահմանված կարգի՝ «Պետական սահմանի մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի և «ՀՀ պետական սահմանի ռեժիմ սահմանելու մասին» ՀՀ կառավարության 2011 թվականի մայիսի 12-ի թիվ 702-Ն որոշման պահանջների խախտմամբ, հատել ՀՀ պետական սահմանը և մուտք գործել օտարերկրյա պետություն՝ Վրաստանի Հանրապետություն, որպիսի նպատակով դիմել է իր ծանոթ Ֆ.Ա.-ին: Վերջինս Ժ.Մ.Խ.Հ.-ի անօրինական միգրացիան՝ օրենսդրությամբ սահմանված կարգի խախտմամբ՝ Հայաստանի Հանրապետությունից նրա ելքը և օտարերկյա պետություն մուտք գործելը շահադիտական դրդումներով կազմակերպելու դիտավորությամբ դիմել է իր ընկերներ՝ սիրիահայեր Հարութ Ջոհրաբի Ղալբուրջյանին և Գ.Հ.Թ.-ին և նրանց ներգրավվել Ժ.Մ.Խ.Հ.-ի անօրինական միգրացիան կազմակերպելու մեջ: Վերջիններս, ինչպես նաև Ֆ.Ա.-ն Ժ.Մ.Խ.Հ.-ի անօրինական միգրացիան կազմակերպելու համար նրանից պահանջել են ընդհանուր՝ 51.000 ԱՄՆ դոլար, որից 10.000 ԱՄՆ դոլարը, Ժ.Մ.Խ.Հ.-ն 2024 թվականի դեկտեմբեր ամսին Երևան քաղաքի Ալեք Մանուկյան փողոցում փոխանցել է Հարութ Ջոհրաբի Ղալբուրջյանին և Ֆ.Ա.-ին:

Շարունակելով իրականացնել իրենց հանցավոր մտադրության ծրագիրը, Գ.Թ.-ն, դիմել է իր մտերիմ, միջազգային բեռնափոխադրող «Կավկաս տուր» ընկերության տնօրեն, թուրքահայ Ջևդեթ Արմենի Քոլչաքին և հայտնել իրենց հանցավոր մտադրության մասին: Վերջինս, իր հերթին պատրաստականություն հայտնելով և

ներգրավվելով խմբի կազմում Ժ.Մ.Խ.Հ.-ի անօրինական միգրացիայի կազմակերպմանը, երաշխավորել է, որ Ժ.Մ.Խ.Հ.-ի անօրինական միգրացիան՝ ՀՀ-ից ելքը և օտարերկրյա պետություն մուտք գործելը կարող է իրականացնել իր ընկեր, ազգությամբ քուրդ Հաբիբ Մուսթաֆայի Էռասլանը:

Դրանից հետո՝ 2025 թվականի մարտի 16-ին, Ջևդեթ Քոլչաքը, Հաբիբ Էռասլանը, Գ.Թ.-ն և Հարութ Ղալբուրջյանը հանդիպել են Երևան քաղաքի Ամիրյան փողոցում գտնվող «Փարիզ» սրճարանում և քննարկել են Ժ.Մ.Խ.Հ.-ի անօրինական միգրացիան կազմակերպելու մանրամասները, որի ընթացքում Հաբիբ Էռասլանը Ժ.Մ.Խ.Հ.-ի մուտքը Վրաստանի Հանրապետություն կազմակերպելու դիմաց պահանջել է 4000 (չորս հազար) ԱՄՆ դոլար: Այնուհետև, որոշ ժամանակ անց Հաբիբ Էռասլանը, Գ.Թ.-ն և Հարութ Ղալբուրջյանը հանդիպել են նաև Երևան քաղաքում գտնվող «Արաբիկա-հուկա» սրճարանում, որտեղ Հաբիբ Էռասլանն առաջարկել է նաև Ժ.Մ.Խ.Հ.-ի անօրինական միգրացիայի կազմակերպման տարբերակ, որին վերջինս չի համաձայնել:

Վերջնական պայմանավորվածություն ձեռք բերելու նպատակով 2025 թվականի մարտի 17-ին՝ ժամը 13-ի սահմաններում, Հաբիբ Էռասլանը, Գ.Թ.-ն և Հարութ Ղալբուրջյանը հանդիպել են Երևան քաղաքում գտնվող «Արաբիկա-հուկա» սրճարանում, որտեղ Հաբիբ Էռասլանը Հարութ Ղալբուրջյանից և Գ.Թ.-ից Ժ.Մ.Խ.Հ.-ի մուտքը Վրաստանի Հանրապետություն կազմակերպելու համար պահանջել է 2000 ԱՄՆ դոլար, որին համաձայնվել և պայմանավորվել են գումարը տալ Ժ.Մ.Խ.Հ.-ի՝ Վրաստանի Հանրապետություն մուտք գործելուց հետո:

Այդ ընթացքում Ժ.Մ.Խ.Հ.-ն Հարութ Ղալբուրջյանի պահանջով պայմանավորված 41.000 ԱՄՆ դոլար գումարը իր աներորդի՝ Օ.Օ.-ի միջոցով Երևան քաղաքի Ալեք Մանուկյան փողոցում փոխանցել է Հարութ Ղալբուրջյանին և Ֆ.Ա.-ին:

Ի կատարումն հանցավոր մտադրության իրագործման և հանցակիցների միջև կատարված նախնական դերաբաշխման՝ Հաբիբ Էռասլանը նկարագրված գործողությունների կատարմանը ներգրավվել է նաև Հայաստանի Հանրապետության քաղաքացի, ազգությամբ եզդի Միրո Ջամալի Մահմուդովին, ով ծանոթ լինելով Լոռու մարզի Գոգավան բնակավայրում գտնվող «Գոգավան» անցակետի՝ հայ-վրացական պետական սահմանի համեմատաբար թույլ վերահսկելի տեղամասերին,

պարտաստականություն է հայտնել մասնակցել Ժ.Մ.Խ.Հ.-ի անօրինական միգրացիայի կազմակերպմանը:

*2025 թվականի մարտի 19-ին՝ ժամը 19-ի սահմաններում, Հաբիբ Էոսալանի պահանջով Ժ.Մ.Խ.Հ.-ն մեկնել է Լոռու մարզի Տաշիր քաղաք, որտեղ հանդիպել է Միրո Մահմուդովին և Հաբիբ Էոսալանին, և վերջինիս պատկանող «*** ******» մակնիշի, ** ** *** հաշվառման համարանիշի ավտոմեքենայով մեկնել են Լոռու մարզի Գոգավան բնակավայրում գտնվող «Գոգավան» անցակետ: Այդ ընթացքում Միրո Մահմուդովը զանգահարել է Վրաստանի Հանրապետությունում գտնվող իր ծանոթ ոմն Ի.-ին, բջջային հեռախոսի «Վոթցապ» հավելվածով նրան է ուղարկել իրենց գտնվելու վայրի մասին տվյալներ և պայմանավորվել նրա հետ Ժ.Մ.Խ.Հ.-ի Վրաստանի Հանրապետություն մուտք գործելուց հետո նրան դիմավորելու և Թբիլիսի տեղափոխելու շուրջ: Այնուհետև, ժամը 23-ի սահմաններում հասնելով նշված վայր՝ Հաբիբ Էոսալանը և Միրո Մահմուդովը Ժ.Մ.Խ.Հ.-ին ուղեկցել են հայ-վրացական պետական սահմանի տվյալ հատվածի ենթադրաբար թույլ վերահսկելի տեղամաս, սակայն Ժ.Մ.Խ.Հ.-ն չի կարողացել հատել ՀՀ պետական սահմանը և մուտք գործել Վրաստանի Հանրապետության տարածք, քանի որ 2025 թվականի մարտի 20-ին՝ ժամը 01-ի սահմաններում հայտնաբերվել են ՀՀ ԱԱԾ ՍԶ ծառայողների կողմից և ձերբակալվել են: (…)»*[1]:

5.1. Վերոհիշյալ ենթադրյալ հանցանքի կատարման համար ՀՀ քրեական օրենսգրքի 44-470-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով կետով հանրային քրեական հետապնդումներ են հարուցվել նաև մեղադրյալներ Հարութ Զոհրաբի Ղալբուրջյանի, Միրո Զամալի Մախմուդովի և Զևդեթ Արմենի Քոլչաքի նկատմամբ[2]:

6. Լոռու մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը, քննարկելով պաշտպան Ի.Առաքելյանի՝ վարույթի տարածքային ընդդատությունը փոխելու միջնորդությունը, 2026 թվականի փետրվարի 18-ի որոշմամբ արձանագրել է հետևյալը. *«(…) Քրեական գործի ուսումնասիրությամբ պարզվում է, որ գործի մասնավոր և օժանդակող մասնակիցների մեծամասնությունը բնակվում են Լոռու մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատական*

---

[1] Տե՛ս քրեական վարույթ, հատոր 10, թերթեր 221-223:
[2] Տե՛ս վարույթի նյութեր, հատոր 10, թերթեր 203-205, 209-211, 215-217:

*տարածքից դուրս՝ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատական տարածքում: Մասնավորապես վարույթով ներգրավված բոլոր թվով 5 պաշտպանների գործունեության հասցեն գտնվում է ***** ********, մեղադրյալներից 2-ը և վկաներից 1-ը նույնպես բնակվում է ***** ********, մեղադրյալներից 2-ը և վկաներից 1-ը բնակվում են առաջին ատյանի մեկ այլ դատարանի՝ մասնավորապես՝ ********** ****** առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատական տարածքում և 1 վկա՝ ***** ******: Դատարանն արձանագրում է, որ նախնական դատաքննության ընթացքում պաշտպանի կողմից գործի տարածքային ընդդատությունը փոխելու վերաբերյալ ներկայացված միջնորդությանը միացել են նաև մյուս պաշտպանները, դրա դեմ չի առարկել հանրային մեղադրողը, իսկ մեղադրյալները տվել են իրենց համաձայնությունը: Դատարանը, նկատի ունենալով, որ քրեական դատավարությանը մասնակցող վարույթի մասնավոր մասնակիցների մեծամասնությունը և վկան բնակվում են Երևան քաղաքի տարածքում և հաշվի առնելով արդարադատության շահը, ինչպես նաև քրեական գործը ողջամիտ ժամկետներում քննելու առաջնահերթությունը, գտնում է, որ պետք է պաշտպանի միջնորդությունը բավարարել, փոխել քրեական գործի տարածքային ընդդատությունը և այն ուղարկել Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարան (…)»*[3]:

7. Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանը 2026 թվականի մարտի 2-ի որոշմամբ արձանագրել է հետևյալը. *«(…) հարկ է ընդգծել, որ Լոռու մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը, թիվ ԼԴ/0032/01/26 քրեական վարույթի տարածքային ընդդատությունը փոխելու մասին որոշում կայացնելիս դրսևորել է ձևական մոտեցում՝ բավարարվելով վարույթի մասնավոր մասնակիցների և վկաների բնակության վայրերի վկայակոչմամբ:*

*Մինչդեռ, քրեական վարույթի նյութերի ուսումնասիրությունից հետևում է, որ դատակոչված անձանցից մեղադրյալներ Հաբիբ Էոսալանը բնակվում է ********* ***** ******* *******, Միրո Մահմուդովը բնակվում է ******** ***** ****** ******, իսկ մյուս երկու մեղադրյալները՝ Հարութ Ղալբուրջյանը և Ջևդեթ Քոլչակը բնակվում են ***** ********:*

[3] Տե՛ս քրեական վարույթ, հատոր 12, թերթեր 77-83:

*Վկաներից Է.Ա.-ն բնակվում է ********* ***** ******* ******, Զ.Մ.-ն բնակվում է ********** ********, իսկ Ժ.Հ.-ն գտնվում է ********** **********:*

Այլ խոսքով՝ սույն վարույթով դատակոչված թվով ութ վերոգրյալ մասնակիցներից միայն երկուսն են բնակվում Երևան քաղաքի վարչական տարածքում:

*Ինչ վերաբերում է այն հանգամանքին, որ մեղադրյալների պաշտպանները բնակվում են ***** ********, ապա հաշվի առնելով այն հանգամանքը, որ վարույթին մասնակցում են մասնավոր պաշտպաններ, բացի այդ, պաշտպանները վարույթի քննության ընթացքում կարող են փոփոխվել, ուստի նշված հանգամանքը քրեական վարույթի տարածքային ընդդատությունը փոխելու հարցի տեսանկյունից վճռորոշ նշանակություն չի կարող ունենալ:*

Բացի այդ, Լոռու մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը որևէ հիմնավորում չի ներկայացրել նաև, թե նշված հայեցողական լիազորության գործադրումը և քրեական վարույթի տարածքային ընդդատության փոփոխությունն արդարադատության շահի տեսանկյունից ինչով է անհրաժեշտ:

Վերոգրյալի հաշվառմամբ Դատարանը գտնում է, որ տարածքային ընդդատությունը փոխելու՝ վերը նշված նախապայմանի վերաբերյալ Լոռու մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի հետևությունները չեն բխում ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 261-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված պահանջից: Նման որոշման կայացումը չի կարող դիտվել իրավաչափ՝ հաշվի առնելով, որ սույն քրեական վարույթով բացակայում է գործի տարածքային ընդդատությունը փոխելու բացառիկ հիմքը, այն է՝ քրեական դատավարությունն արդյունավետ կազմակերպելու, տեխնիկական և իրավական բնույթի բարդություններն ու խնդիրները բացառելու և պետության ֆինանսական ռեսուրսները խնայելու նկատառումներից ելնելով վարույթը ենթադրյալ հանցանքի կատարման վայրից այլ տարածքի դատարան ուղարկելու անհրաժեշտությունը: (...)»[4]:

<u>Վճռաբեկ դատարանի քրեական պալատի հիմնավորումները և եզրահանգումը.</u>

---

[4] Տե՛ս քրեական վարույթ, հատոր 12, թերթեր 97-103:

8. Սույն վարույթով բարձրացված իրավական հարցը հետևյալն է. հիմնավո՞ր է արդյոք Լոռու մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի կողմից թիվ ԼԴ/0032/01/26 քրեական վարույթի տարածքային ընդդատությունը փոխելու և վարույթը Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարան փոխանցելու մասին որոշումը:

9. ՀՀ Սահմանադրության 63-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «*Յուրաքանչյուր ոք ունի անկախ և անաչառ դատարանի կողմից իր գործի արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետում քննության իրավունք*»:

10. «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Յուրաքանչյուր ոք, (...) նրան ներկայացված ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ, ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ ու անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք*»:

10.1. Մարդու իրավունքների եվրոպական դատարանը, *«օրենքի հիման վրա ստեղծված դատարան»* հասկացությունը մեկնաբանելիս նշել է. *«Այն երկրներում, որտեղ օրենքը կոդիֆիկացված է, դատական համակարգի կազմակերպումը չի կարող թողնվել դատական մարմինների հայեցողությանը, սակայն դա չի նշանակում, որ դատարաններն օժտված չեն համապատասխան ազգային օրենսդրությունը մեկնաբանելու որոշակի ազատությամբ»*[5]:

Միևնույն ժամանակ, դատական մատչելիության իրավունքի համատեքստում Մարդու իրավունքների եվրոպական դատարանը նշել է, որ *«Ներպետական դատական ատյանները դատավարական կանոնները կիրառելիս պետք է ձեռնպահ մնան դրանց չափազանցված ձևականացումից, որն իր ազդեցությունը կունենա դատավարության արդարացիության վրա»*[6]:

---

[5] Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Gorgiladze v. Georgia* գործով 2009 թվականի հոկտեմբերի 20-ի վճիռը, գանգատ թիվ 4313/03, 69-րդ կետ:

[6] Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Walchli v. France* գործով 2007 թվականի հուլիսի 26-ի վճիռը, գանգատ թիվ 35787/03, 29-րդ կետ:

11. Վճռաբեկ դատարանն անձի՝ օրենքի հիման վրա ստեղծված դատարանի կողմից իր գործի քննության իրավունքի հիմնարար նշանակության վերաբերյալ իրավական դիրքորոշում է ձևավորել *Գևորգ Հարությունյանի* որոշմամբ[7]:

12. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 261-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ «*Տարածքային ընդդատությունը բոլոր մեղադրյալների համաձայնությամբ կարող է փոխվել, եթե վարույթի մասնավոր մասնակիցների և վկաների մեծամասնությունը բնակվում է առաջին ատյանի մեկ այլ դատարանի դատական տարածքում: Ընդդատությունը փոխելու որոշումն ընդունում է մեղադրանքը քննող դատարանը*»:

Նույն օրենսգրքի 263-րդ հոդվածի համաձայն՝ *«(…) 4. Վարույթն ըստ տարածքային ընդդատության ստացած առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը մինչև նախնական դատաքննություններ նշանակելը եռօրյա ժամկետում որոշում է կայացնում վարույթը Վճռաբեկ դատարանի քրեական պալատ ուղարկելու մասին, եթե համաձայն չէ վարույթի տարածքային ընդդատությանը:*

(…)

7. Սույն հոդվածի 4-րդ մասով նախատեսված դեպքում Վճռաբեկ դատարանի քրեական պալատը վարույթը Վճռաբեկ դատարանում ստանալու պահից հնգօրյա ժամկետում վերջնականապես լուծում է վարույթի տարածքային ընդդատության հարցը: (…)»:

13. Սույն վարույթի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ՝

- վարույթին ներգրավված են թվով 12 (տասներկու) մասնավոր մասնակիցներ և վկաներ, որոնցից մեղադրյալներ Հ.Ղալբուրջյանի, Ձ.Քոլչաքի[8], պաշտպաններ Բ.Եղիազարյանի, Ա.Առաքելյանի, Գ.Մխիթարյանի, Դ.Հարությունյանի, Ի.Առաքելյանի բնակության վայրն է ***** ******[9], վկա Ժ.Հ.-ն հանդիսանում է ** ********** ********** «**********» ********** ******** **********, մեղադրյալներ Հ.Էռասլանի,

---

[7] Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ *Գևորգ Հարությունյանի* գործով 2011 թվականի հուլիսի 13-ի թիվ ԵԿԴ/0211/01/10 որոշումը, կետեր 15-16:

[8] Տե՛ս վարույթի նյութեր, հատոր 11, թերթ 75:

[9] Տե՛ս վարույթի նյութեր, հատոր 12, թերթեր 18,19,22,23,26,27,30-33:

Մ.Մախմուդովի և վկա Է.Ա.-ի բնակության վայրն է ********** ******, վկա Ջ.Մ.-ի բնակության վայրն է ***** *****[10]:

- Լոռու մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը, փաստելով, որ սույն վարույթի մասնավոր մասնակիցների և վկաների մեծամասնությունը բնակվում է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանի դատական տարածքում, ինչպես նաև այն, որ մեղադրյալներն իրենց համաձայնությունն են հայտնել վարույթն ըստ ընդդատության Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարան փոխանցելուն, որոշում է կայացրել քրեական վարույթի տարածքային ընդդատությունը փոխելու և վարույթը Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարան փոխանցելու մասին[11]:

- Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանը փաստել է, որ Լոռու մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը սույն վարույթի տարածքային ընդդատությունը փոխելիս դրսևորել է ձևական մոտեցում՝ բավարարվելով վարույթի մասնավոր մասնակիցների և վկաների բնակության վայրերի վկայակոչմամբ:

Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանը նշել է նաև, որ մեղադրյալների պաշտպանները վարույթի քննության ընթացքում կարող են փոփոխվել, ուստի նշված հանգամանքը քրեական վարույթի տարածքային ընդդատությունը փոխելու հարցի տեսանկյունից վճռորոշ նշանակություն ունենալ չի կարող:

Բացի այդ, Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանն արձանագրել է, որ բացակայում է սույն քրեական վարույթով տարածքային ընդդատությունը փոխելու բացառիկ հիմքը, այն է՝ քրեական դատավարությունն արդյունավետ կազմակերպելու, տեխնիկական և իրավական բնույթի բարդություններն ու խնդիրները բացառելու և պետության ֆինանսական

---

[10] Տե՛ս վարույթի նյութեր, հատոր 11, թերթ 75,76:
[11] Տե՛ս սույն որոշման 6-րդ կետը:

ռեսուրսները խնայելու նկատառումներից ելնելով վարույթը ենթադրյալ հանցանքի կատարման վայրից այլ տարածքի դատարան ուղարկելու անհրաժեշտությունը[12]:

14. Սույն վարույթի փաստական հանգամանքները գնահատելով վերոշարադրյալ իրավադրույթների և իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանի քրեական պալատն արձանագրում է, որ Լոռու մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը, ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 261-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված՝ քրեական վարույթի տարածքային ընդդատությունը փոխելու լիազորությամբ, քրեական վարույթի տարածքային ընդդատությունը մեղադրյալների համաձայնությամբ փոխել և վարույթը Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարան է փոխանցել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի պահանջների պահպանմամբ: Մասնավորապես, սույն վարույթին ներգրավված են տասներկու մասնավոր մասնակիցներ և վկաներ, որոնց մեծամասնությունը՝ ութ անձ, ներկայում փաստացի բնակվում (գտնվում) է ***** ****** ****** ****** ******* ********** ******* դատարանի դատական տարածքում: Հարկ է նշել, որ սույն վարույթի մասնավոր մասնակիցների և վկաների մեծամասնության՝ ***** ******** բնակվելու հանգամանքը, Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանը կասկածի տակ չի դրել:

15. Վերոգրյալը հիմք է տալիս փաստելու, որ սույն վարույթի փաստական հանգամանքների պայմաններում Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանի որոշմամբ ներկայացված հիմնավորումները բավարար չեն արձանագրելու, որ սույն վարույթի տարածքային ընդդատությունը փոխելու անհրաժեշտությունն արդարադատության շահի տեսանկյունից բացակայել է:

16. Ամփոփելով՝ Վճռաբեկ դատարանի քրեական պալատն արձանագրում է, որ Լոռու մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի կողմից թիվ ԼԴ/0032/01/26 քրեական վարույթի տարածքային ընդդատությունը փոխելու և քրեական վարույթը Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարան փոխանցելու մասին որոշումը հիմնավոր է:

---

[12] Տե՛ս սույն որոշման 7-րդ կետը:

17. Վերոգրյալի հիման վրա, Վճռաբեկ դատարանի քրեական պալատը գտնում է, որ սույն քրեական վարույթն ըստ ընդդատության պետք է ուղարկել Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարան:

Վերոշարադրյալի հիման վրա և ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 263-րդ հոդվածի 7-րդ մասով՝ Վճռաբեկ դատարանի քրեական պալատը

Ո Ր Ո Շ Ե Ց

Թիվ ԼԴ/0032/01/26 քրեական վարույթն ըստ ընդդատության ուղարկել Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարան:

Նախագահող՝ _____ Հ.ԱՍԱՏՐՅԱՆ

Դատավորներ՝ _____ Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆ

_____ Հ.ԳՐԻԳՈՐՅԱՆ

_____ Ա.ԴԱՆԻԵԼՅԱՆ

_____ Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆ

_____ Ա.ՊՈՂՈՍՅԱՆ